



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՎՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻ ԵՒ ՀՈՒԿՈՒՄՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՍԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ  
ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՍԱՏՈՒՑԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ  
ԸՆԹԱՑՔԻՆ

### ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՉԱՐԴԱՐՈՒԱԾ ԱՌԱՋՆՈՐԴԵՆՔ ՄԵՐ ՀԱՄԱՔԻ ԿԵԱՆՔԸ

*ՊԱՏՉԱՄԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀԱՅՐԸ*

Մեր եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Ս. Յովհաննու Կարապետի տօնը այս տարի կը գուգադիպէր Հինգշաբթի, 15 Յունուարին: Նկատի ունենալով, որ այս տօնը նաեւ Հոլովուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ անուանակոչութեան տօնն է, Կիրակի, 18 Յունուարին, եպիսկոպոսական հանդիսաւոր սուրբ եւ անմահ Պատարագ մատուցուեցաւ Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ, եւ խնդրուեցաւ մարգարէներու գերագոյնին եւ կիներուն մէջ ծնածներէն մեծագոյնին, յորովայնէ Զրիստոսի երկրպագող՝ Ս. Յովհաննէս Մկրտիչի բարեխօսութիւնը եւ սրբութիւնը այսօրուան ապրողներուս համար:

Ս. եւ անմահ Պատարագը մատոյց թեմիս բարեջան Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան: Ս. Սեղանին սպասարկեցին Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Վիգէն Ա. Զինյ. Վասիլեան:

Քարոզի պահուն Սրբազան Հայրը նախ փառք եւ գոհութիւն յայտնեց ամենաբարին Աստուծոյ, այս օրինեալ եւ հոգելից պահուան համար, եւ օրինեց յիշատակը բոլոր անոնց՝ որոնք հաւատքով կառուցին այս եկեղեցին, հաւատքով գործեցին ու հիմա կը գտնուին իրենց յաւիտեանական հանգիստին մէջ: Նաեւ Սրբազան Հայրը բարձր գնահատեց ու օրինեց բոլոր անոնք՝ հոգեւոր հովիւ, հոգաբարձուներ, երեսփոխաններ, Տիկնանց անդամուհիներ, դպրաց դասի անդամներ, բարերարներ ու հաւատացեալներ, որոնք միասնաբար շէն ու պայծառ կը պահեն այս եկեղեցին, ի շինութիւն ազգիս հայոց եւ ի պանծացումն Հայց. Առաքելական եկեղեցւոյ:

Ապա Սրբազանը իր քարոզին մէջ անդրադարձաւ Ս. Յովհաննէս Մկրտիչի անձին ու մանաւանդ այն եզակի առաքելութեան, որ ի վերուստ անոր տրուած էր եւ որուն կատարման համար ինք ծնած էր: Սրբազանը մէջբերեց Ս. Օգոստինոսի այն հաստատումը, թէ սուրբերուն յիշատակը կը տօնախմբուի, երբ անոնք կը ննջեն եւ իրենց ապրած անբասիր կեանքին պատճառով Աստուծոյ սուրբ ներկայութեան դիմաց կը կանգնին: Մինչդէռ, սակայն, Ս. Յովհաննէս կարապետ տակաւին իր մօրը որովայնին մէջ՝ յորովայնէ ստացաւ Ս. Յոգին եւ կանգնեցաւ Տիրոջ առջեւ՝ երկրպագելով Յիսուսի Քրիստոսի:

Յովհաննէս Մկրտիչ, Եղիայի հոգիով ու զօրութեամբ լեցուած, հրաւիրեց մարդիկը խոնարհութեամբ եւ ապաշխարութեամբ իրենց հոգիները մաքրելու եւ Աստուծոյ դառնալու: Եւ այս խոստումները անոր անձին մասին հրեշտակին կողմէ իր հօրը՝ Չաքարիայի եղան՝ նախքան Յովհաննէսի ծնիլը: Ան երբեք չտկարացաւ իր հաւատքին մէջ, այլ մնաց տոկուն ու դարձաւ ախոյեան: Եղաւ արդարութեան շեփորահար եւ երբեք չվախցաւ արդարութիւնը խօսելէ, միշտ եղաւ քաջ իր խօսքերուն մէջ: Ան ոչ միայն ինքնիրեն համար աշակերտ պատրաստեց, այլ Տիրոջ գալուստին համար աշակերտներ պատրաստեց, հրաւիրելով անոնց առաքիլութիւններով զարդարելու իրենց կեանքը, որովհետեւ ով որ առաքիլութիւններով կը պայծառացնէ իր կեանքը՝ Աստուծոյ գաւակ կը դառնայ:

Երկրորդ, Յովհաննէս Մկրտիչ իր ծառայական կեանքով, իր քարոզութեամբ հրաւիրեց մարդիկը, որ արդարութեամբ ապրին եւ գործեն, որուն լաւագոյն օրինակը ինք տուաւ՝ իր ապրած արդար վարքով. թէեւ բանտարկուեցաւ, չարչարուեցաւ՝ սակայն երբեք չդադրեցաւ արդարութիւնը խօսելէ: Ան սորվեցուց մարդոց իրարու հետ արդարութիւն գործել, նաեւ սորվեցուց թէ ինչպէ՛ս երկիւղած պէտք է ըլլալ Աստուծոյ պատուիրանները գործադրելով:

Այսօր իբրեւ ուխտաւորներ եկած ենք տօնելու Ս. Յովհաննէս Մկրտիչի տօնը: Ականջ տանք իր պատգամներուն. ան իր կեանքի օրինակով կը թելադրէ մեզի անկաշառ հաւատք ունենալ, արդար ըլլալ, քաջ ըլլալ, անկեղծ սեր ունենալ իրարու նկատմամբ եւ Աստուծոյ պատուիրանները գործադրել: Անոր քարոզութեան լոյսին տակ քննենք մենք մեզ, թէ որքանո՞վ իրարու հանդէպ արդարութեամբ կը գործենք, թէ որքանո՞վ Աստուծոյ պատուիրանները կը գործադրենք, թէ որքանո՞վ հաւատքով կ'ապրինք: Արդ, առաքիլութիւններով զարդարուած առաջնորդենք մեր հաւատքի կեանքը, եզրակացուց Սրբազան Հայրը:

Ս. Պատարագի աւարտին, տեղի ունեցաւ մատաղօրհնէք: Բաշխուող մասին հետ մատաղն ալ բաժնուեցաւ, եւ հաւատացեալներ իրենց տունները վերադարձան հոգեւոր ապրումներով լիցքաւորուած, ուրախութիւնը իրենց սրտին եւ մատաղը՝ իրենց ձեռքին:

Պատարագէն անմիջապէս ետք, եկեղեցւոյ «Կարապետեան» սրահին մէջ տեղի ունեցաւ սիրոյ ճաշ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, ներկայութեամբ քահանայ հօր, Ազգային Վարչութեան ներկայացուցիչներու, եկեղեցւոյ Հոգաբարձական կազմին, Տիկնանց Օժանդակ Մարմնին, Սարկաւագաց ու Դպրաց դասերուն, երգչախումբի

անդամներուն, եկեղեցոյ բարերարներուն ու բարեկամներուն, եւ հաւատացեալ բազմութեան:

## **CELEBRATING THE FEAST OF ST. JOHN THE FORERUNNER AND THE NAME DAY OF ST. GARABED CHURCH**

On Sunday, January 18<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy at St. Garabed Church in Hollywood in honor of the name day of the Church as well the Feast of St. John the Forerunner which according to the Armenian Church calendar fell on Thursday, January 15<sup>th</sup>. Assisting at the altar were Christian Education Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian and parish pastor Archpriest Fr. Vicken Vassilian.

At the start of his sermon the Prelate thanked Almighty God for granting the celebration and beseeched the Lord to bless the memories of those who established the church and faithfully served towards the progress of the parish. The Prelate commended also the present servants of the church, the Pastor, Delegates, Board of Trustees, Ladies Auxiliary, Choir, sponsors, and parishioners who continue to labor for the advancement of the church.

In his sermon the Prelate reflected on the life of St. John the Forerunner and on the mission God sent him forth to fulfill. In fact, he received the Holy Spirit while still in the womb and the angel proclaimed to his father Zecharia of his mission to bring the people to God by calling on them to repent and cleanse their spirits. He emphasized that throughout his life St. John remained unfaltering in his faith and steadfast in his teachings and prepared disciples for the coming of Christ by inviting them to live virtuously so that they too would become children of God.

St. John became the ideal of how to live a righteous life through the way he lived his life, and instructed the people to live and serve in the same manner, and though he was arrested and tortured, he never ceased to speak the truth. He taught mankind how to live and work together justly and adhere to the Lord's commandments.

The Prelate concluded his sermon by calling on the faithful to assess their lives to ensure that they are applying the teachings of St. John to their everyday lives, to be resolute in their faith, live and act justly, love one another, and abide by the Lord's commandments.

At the conclusion of Divine Liturgy the Prelate blessed the *madagh*, which was then distributed to the faithful, after which the Prelate presided over the reception at "Karapetian" Hall.